



87. ԻՄԱՍՏՈՒՆ ԱՂՋԻԿ

Ժամանակով թագավորն ու վազիր զհալավ ուրանց կը փոխին, գելնան, օր մըջ ուրանց էրկրին զվոնին, ժողովրդի հալ ու վախթն չիմնան: Ճամպին մարդ մե գեկա կէղնի չընկեր, խել մե կէրթան, թագավոր կըսե:

— Մա՛րդ, չըս կոնա՞ զճամպեն կարճըցու, շուտ հասնինք քաղաք:

Մարդ կը զարմանա:

— Ճամպեն ի՞մալ կարճըցում, պտի զոր տանք մեր չոտնե՜րուն, օր հասնինք քաղաք:

Թագավոր ձեն չը հանե:

Կը հասնին գետի մե: Թագավոր կըսե.

— Արեք կարմունջ մե կապինք, զգետ չընցնանք:

Մարդ էլման կը զարմանա, կը ծիծղա:

— Ի՞դա մարդ ծուռ է,— կըսե,— իրեք մարդով, անքար, անփետ, կարմունջ ի՞մալ կը ջինվի:

Թագավոր ձեն չը հանե:

Կը հասնին քաղաք, մարդ կէրթա ուր տուն, աղջկան խսա կէնե, կըսե.

— Ճամպին հմլա-հմլա էրկու մարդ ոաստ էկան ուրին, հմլաբաներ ուրին ըսին, ինչ օր ծուռ էղնեն:

Աղջիկ կըսե.

— Իմ հե՛ր, էդ մարդիկ ծուռ չին, խելացի ին, դու չը հասկըցեր իս զընդոնց խոսքի միտք. օր ըսած ին «զճամպեն կարճըցուս», դու.

պտի մե հեքաթ, նաղլ էներ, օր ճամպեն կարճ էրեներ վըր ձըղի: Օր ըսած ին ճարեք կարմունջ մե շինինք», դու պտի ըորկներ, ջալկեր զըղոնք, գետեն չընցուցեր: Լուսուն կէրթաս, կը կանչիս մըր տուն, իսպե մե խմին:

Օլոր օր աղջկա պապ բողջե մե կը տանե դնե թագավորի յառեջն ու վագիրին: Զրողեն կը բանան՝ մեջ խոռ գաթե մե ու քսանրին հավկիթ, կը զարմանան, կը թալին, կը բռնին, օր էդ ամսի քսանրինն էր, լուսնակ լե նորելու վրա է:

Թագավորն ու վագիր կէրթան աղջրկա տուն, կը տեսնան դամ ու դագգեն, աղջրկա մարիֆաթ, չեղնել, մտնել՝ կը զարմանան: Թագավոր խստու կիշկե տան պատ ու յառիք, կըսե.

— Վա՛գիր, ավ դուզալ դըր, յագուխ քի փաջա ագրի դըր¹:

Աղջիկ պատասխանեն կիտա.

— Փաջա ագրի դըր, ֆախաթ թուսուսի տողրու չըխար²:

Թագավոր մտքի մեջ կըսե. «Ձաղջիկ պտի թոզիմ վագիրի փողպատ, տեսնանք կոնա՞ տակից դուս գա»:

— Վա՛գիր,— կըսե թագավոր,— քըզնե գուզիմ, օր էրթաս խոչ մե դնիս, դառնաս ծախիս ուր գնով, ուր մսեն ընձի քյաբար մե կերցուս, զխոչ լե գարձուս բերիս, թե չէ՝ դգուխդի կիտամ կտրել:

Վագիր կը շիվրի մնա, հավար կը թալե աղջիկ:

Աղջիկ խոչ մե դուզե, զըուրդ կիտա կնդել, կը մանե, կը ներկե, խորոտիկ ջաջիմ մե կը գործե, կը ճամպե շուկեն, խոչու գնով կը ծախե, զխոչու ձվեր կիտա հանել, թագավորի համար քյաբար կը ջինե, խոչ լե սաղ կը դառձու կիտա թագավորին:

Թագավոր ու վագիր կըսին.

— Հախիխաթ փաջա ագրի դըր, ֆախաթ թուսուսի տողրու չըխար³:

¹ Տունը գեղեցիկ է, ափսո՛ս, որ ծխնելույզը ծուռ է (աղջիկը շիւ է) (Մ. Բ.):

² Ծխնելույզը ծուռ է, բայց ծուխն ուղիղ է ելնում (Մ. Բ.):

³ Թեև ծխնելույզը ծուռ է, բայց ծուխն իրապես ուղիղ է դուրս ելնում (Մ. Բ.):

